

վրայ և զովացընէ զիրենք, ինչպէս կը հանգիստի ոսկերչաց ու խահվէի խանութները, և ուրիշ գործատանց մէջ, ուր որ ածուխ, կազ և շատ բազմութիւն ճրագի անհրաժեշտ հարկաւոր են գործաւորաց:

Կը շարունակուի:

Փայտի սղոցուքէն շաքար հանել.

Թերեւս մէկն լսելով թէ փայտի սղոցութեն ալ շաքար կրնայ հանուիլ, իրեն անկարելի առաջարկութիւն մ'երևայ. սակայն չկայ բնաւոյժ մը՝ որ տարակուսի այս առաջարկութեանս վրայ: Հիմայ այն հանճարեղ անձն կը պակսի, որ կարենայ այս առաջարկութիւնս 'ի գործ դնել և յարգիւնս բերել: — Ո՛րչափ շահաւոր պիտի ըլլայ զիտութեան այս արդիւնքս ալ, եթէ կարենայ ասով ընուլ մարդկանց շաքարի գործածութեան պէտքը:

Այլ և այլ նիւթերէ կը հանեն աղնիւ շաքար, բաւական արժան գնով. ինչպէս օսլայէն՝ այսպէս ալ, մանաւանդ թէ աւելի առատ՝ կ'ելլայ շաքար փայտի սղոցութեն Եւրոպիոյ ամեն կողմերը:

Փայտի ամեն երակներն, նոյնպէս հին մին լաթեր կրնան շաքար ըլլալ. և այս օրագրիս նիւթական մասերն ալ, եթէ ուրիշ պայմանի մէջ գտնուէին, կրնար ըլլալ որ շաքար ըլլային:

Նոր տեսակ կառք. — Անգղիացի օրագիրները կ'իմացունեն որ Պիրմինկէմ քաղաքը ընկերակցութիւն մը ձևացած է մօտ ատեններս տեսակ մը կառք շինելու բոլորովին նոր: Կառքին կմախքը երկրի մէջ պիտի ըլլայ, բայց բոլոր տախտակամածները, որ սովորական կառքերու մէջ փայտեայ կ'ըլլայ, հոս պիտի ըլլայ ծեծուած և լոսած թուղթ: Տարակոյս չկայ որ հալած

և պնդացուցած թուղթը այնպիսի դիմացկուն ոյժ կը ստանայ, ուրիշ շատ արուեստից մէջ փորձուած, որ եթէ փայտէն աւելի չէ, գոնէ անոր հաւասար սերտութիւն և հաստատութիւն ունենալը չկրնար մերժուիլ: Իսկ թեթեւութիւնը քան զփայտը և գործելուն զիւրութիւնը անհամեմատ աւելի կ'ըլլայ, երբոր մտածենք որ թափու մետաղներու պէս ամենայն ձև կրնայ առնուլ: — Պիրմինկէմի ընկերութիւնները կը լսեմք որ բազմաթիւ յանձնարարութիւններ ունեցեր են ցարդ:

Զգայունութիւնը շատ անգամ երևակայութենէ կ'ելլէ, քան թէ սրտէ:

Ընտանեաց սէրը յոմանս անձնասիրութիւն է:

Գոռոզութիւն, շահասիրութիւն և անհաւատութիւն՝ ոչ այլ ինչ է բայց անսիրելիութիւն:

Ախտերը այնպէս քաղաքները կը ժողովին, ինչպէս անասունները 'ի վաճառանոցս:

Պզտի առաքինութիւնները երբեմն միջնորդ կ'ըլլան մեծամեծ պակասութեանց:

Ազնուական անձանց կատարելութիւնը պարտք մըն է. իսկ ցածերուն պարտքը պերճութիւն մըն է:

Փոյլը երազութեան կը յաղթէ. ճապուկութիւնը ուժի:

Ն. ԹՈՄՄԱՋԷՆՑ